

## ԵԹԵ ԳՈՒՄԱՐ ԼԻՆԵՐ, ԿԱՆԵԻՆՔ ԱՎԵԼԻՆ



Վերջին շրջանում բավականին հաճախակի էին դարձել Գիտության պետական կոմիտեի աշխատանքների մասին քննարկումները, հասկապես այն բանից հետո, երբ Վերահսկիչ պալատն իր 2011թ. հաշվետվության մեջ նշեց կոմիտեի կողմից թույլ տված մի շարք խախտումների մասին: Վերջերս հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ Գիտպետկոմի նախագահի կողմից տրվեցին մի շարք պարզաբանումներ՝ այդ եւ այլ հարցերի հետ կապված: Մասնավորապես, պարզ դարձավ, որ այդ խախտումները վերաբերում են Գիտպետկոմի 2008-2010 թթ. գործունեությանը: Այդ խախտումները կուտակվել էին մինչեւ Գիտպետկոմի ստեղծումը, այն հիմնականում գործող կարգերի եւ օրենքների անկատար լինելու պատճառով էր: Այժմ այդ բացթողումներն ամբողջությամբ ուղղվել են:

ԳՊԿ գործունեության մանրամասներին ծանոթանալու համար մենք որոշեցինք հարցազրույց վերցնել ԳՊԿ նախագահ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՑ:

- Ըստ էության, Հայաստանում գիտությամբ զբաղվում են երեք կազմակերպություններ՝ ԿԳ նախարարությունը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան եւ Գիտության պետական կոմիտեն: Չե՞ք կարծում, որ այս ամենը չափից ավել է: Լավ չէ՞ր լինի այդ հարցերով զբաղվեր մեկ կառույց, իսկ խնայված գումարները կարելի էր տնտեսել եւ ներդնել գիտության մեջ:

- Մեզ մոտ գիտությամբ զբաղվում են գիտական հիմնարկները, իսկ ԳՊԿ-ն գիտությամբ չի զբաղվում, այլ իրականացնում է պետության կողմից գիտության եւ գիտատեխնիկական գործունեության պետական քաղաքականությունը: Այսինքն՝ մշակում է պետության կողմից պատվիրված ռազմավարական ծրագրերը, պատասխան է տալիս միջազգային համագործակցության, համակարգի բնականոն եւ կայուն զարգացման համար եւ այլն : Ինչ վերաբերում է ակադեմիային, ապա այն համակարգ է, որը կոորդինացնում է իր կազմում գտնվող պետական գիտական կառույցների գիտական գործունեությունը, իրականացնում է պետության կողմից ներկայացված գիտական պատվերները եւ կառավարության հիմնական խոհրդատուն է գիտության ոլորտում: Ինչպես տեսնում եք, այս երկու կառույցների գործառնությունները բացարձակապես իրար չեն ծածկում: Գիտությունը տնտեսության ոլորտ է, ասենք՝ ինչպես գյուղատնտեսությունն է, եւ, հետեւաբար, պետք է ունենա այդ ոլորտը համակարգող պետական կառավարչական մարմին: Այդ մարմինը կարող է լինել կամ նախարարություն կամ պետական կոմիտե: Այսպիսով, Գիտության պետական կոմիտեն ԿԳ նախարարության կազմի մեջ մտնող

պետական կառավարման միակ մարմինն է, որը պատասխան է տալիս մեր երկրում գիտական եւ գիտատեխնիկական գործունեության համար:

- Որոշ ժամանակ առաջ ԳՊԿ աշխատակազմի ղեկավարը հեռացվեց պաշտոնից, ո՞րն էր պատճառը:

- Նա չի հեռացվել իր պաշտոնից, այլ դուրս է եկել աշխատանքից իր դիմումի համաձայն եւ այժմ զբաղվում է դասախոսական աշխատանքով:

- Ինչպե՞ս եք տեսնում գիտության զարգացման հիմնական ուղղությունները Հայաստանում, մասնավորապես՝ ի՞նչ կասեիք Ֆիզիկայի ինստիտուտի արագացուցչի ապագայի մասին:

- 2011-ից մինչեւ 2020թ. Հայաստանի գիտության զարգացման ռազմավարության մեջ նախանշված են 6 թիրախներ՝

1. գիտության ոլորտի կայուն զարգացման ապահովում,
2. գիտական ներուժի արդյունավետ վերարտադրում,
3. հիմնարար եւ կիրառական հետազոտությունների խթանում,
4. կրթության, գիտության եւ տեխնոլոգիաների համահունչ զարգացման ապահովում,

5. միջազգային համագործակցության զարգացում (գիտությունը այնպիսի մի համակարգ է, որն ինքնիրեն չի կարող զարգանալ, այն պետք է միջազգային համագործակցության միջոցով զարգանա),

6. հայագիտության զարգացում, որին մենք շատ մեծ կարեւորություն ենք տալիս՝ նկատի ունենալով մեր պատմությունը, մեր անցյալը, եւ սա՝ որպես թիրախային խնդիր, մենք առաջնային ենք համարում:

Մրանք են առաջնահերթ այն խնդիրները, որոնք մինչեւ 2020թ. մենք տեսնում ենք, եւ եթե այդ ընթացքում կարողանանք մեր առջեւ դրված խնդիրները սահուն կերպով լուծել, ապա կարծում եմ՝ մինչեւ 2020թ. կդառնանք Եվրոպայում մրցունակ գիտություն ունեցող պետություն: Ռազմավարական որոշ խնդիրներ լուծելու նպատակով ֆիզիկայի ինստիտուտը դարձել է ազգային լաբորատորիա, կառավարության որոշումով ստեղծվել է հոգաբարձուների խորհուրդ, որը համակարգում է ինստիտուտի աշխատանքները:

Ինչ վերաբերում է արագացուցչին, ապա այն բավականին հին է եւ արդեն իսկ լուծել է իր առջեւ դրված բազմաթիվ խնդիրներ: Այն իր ժամանակի համար աշխարհի լավագույններից մեկն էր: 1963 թ., երբ այդ արագացուցիչը սկսեց գործել, Հայաստանն այն եզակի երկրներից էր, որն ուներ այդպիսի կարեւոր սարքավորում: Այն էապես բարձրացրեց մեր գիտության վարկանիշը: Եթե մենք ապագայում ունենալու ենք նոր արագացուցիչ, այն պետք է ուրիշ լինի՝ նոր ժամանակներին համահունչ: Կարծում եմ, որ այդ հին արագացուցիչը կարող է դառնալ երիտասարդ գիտնականների համար ուսումնական կենտրոն: Ինչ վերաբերում է նորին, հավանաբար, շատերն են տեղյակ «Քենդլ» ծրագրի մասին: Այն լինելու է երրորդ սերնդի սինքրտրոնային ճառագայթման արագացուցիչ: Այն լիովին կձառայի գիտական եւ կիրառական բազմաթիվ խնդիրների լուծմանը:

«Քենդլ» ծրագիրը համակարգաստեղծ մեզա ծրագիր է: Ծրագրի առաջին փուլը մենք կավարտենք եկող տարվա ապրիլ ամսին, եւ եթե ամեն ինչ նորմալ գնա, հավանաբար 2016 թվականին կունենանք նոր արագացուցիչ, եւ Հայաստանը կհայտնվի բարձր գիտական մակարդակ ունեցող երկրների ցուցակում: Մենք ունենք շատ լավ երիտասարդ գիտնականներ, որոնց ամեն տարի ուղարկում ենք վերապատրաստման՝ ապագա արագացուցչային համալիրի վրա աշխատելու համար:

- Մտավախություն չունե՞ք, որ լավ գիտնականները հեռանում են երկրից:

- Այն, որ հեռանում են երկրից, վատ բան է, իհարկե, բայց չգնալը, դրսի նիստուկացին չմասնակցելը նույնպես սխալ մոտեցում է: Որպեսզի կարողանանք որեւէ լուրջ գիտական առաջընթաց ունենալ, պետք է միջազգային գիտական ծրագրերում ինտեգրվենք: Եթե մենք երիտասարդ գիտնականներին թույլ չտանք երկրից հեռանալ, պատկերացնո՞ւմ եք՝ ինչ կլինի: Ավելի լավ չէ՞ մեր երիտասարդները գնան դրսում իրենց գիտելիքները լավացնեն, նորմալ մասնագետներ դառնան, հետագայում մենք մտածենք կամ այդ երիտասարդներին հետ բերելու, կամ նրանց ստացած ժամանակակից գիտելիքները օգտագործելու մասին:

Ցավոք, այսօր Հայաստանը չունի մեծ գումարներ գիտության վրա ծախսելու համար, որովհետեւ պետությունը ստիպված է բազմաթիվ այլ խնդիրներ լուծել: Այսօր երիտասարդներին Հայաստանում փակել իմաստ չունի, եւ դրա իրավունքը որեւէ մեկը չունի, ու դա սխալ մոտեցում է: Կարծում եմ, ովքեր դեմ են երիտասարդների ազատ տեղաշարժին, տառապում են կեղծ հայրենասիրությամբ: Մենք այսօր ինտերնետի դարաշրջանում ենք ապրում, եւ շատ բաներ այժմ հեշտացել են, այդ թվում եւ՝ գիտությամբ զբաղվելը: Կան պետություններ, որոնք հետազոտություններ են անում այլ երկրներում՝ ինտերնետի միջոցով: Եթե մենք այժմ գիտության ոլորտում ունենանք միջազգային կապեր, ապա չնչին գումարներով կարող ենք մեծ նախագծեր անել: Գիտությունը գլոբալիզացված համակարգ է: Ես սարսափելի բան չեմ տեսնում գիտնականների ազատ տեղաշարժերի մեջ:

- Վերջին շրջանում մեր գիտական ամենամեծ ձեռքբերումը ո՞րն է:

- Կարծում եմ՝ ավելի ճիշտ է խոսել մեր գիտնականների աշխատանքի արդյունավետության մասին, որն իմ կարծիքով, տարածաշրջանում ամենաբարձրն է: Ծախսելով չնչին գումար գիտության վրա, մենք այժմ ավելի մեծ գիտական արդյունք ենք տալիս, քան, ասենք, նույնիսկ Ռուսաստանը: Խոսքը վերաբերում է 1000 գիտնականների կտրվածքով տպագրված գիտական հոդվածների թվաքանակին եւ հղումների թվաքանակին: Այս ցուցանիշներով տարածաշրջանում մենք զիջում ենք միայն Իսրայելին:

Իսկ ինչ վերաբերում է ապագա ձեռքբերումներին, ապա կարծում եմ, եթե «Քենդլ» նախագիծը մենք կարողանաք 2016 թ. իրականացնել, դա եւ կհամարեմ նվաճում:

Աշխարհում ընդամենը 12-13 պետություն կա, որոնք միաժամանակ ունեն են՝ 1. ատոմակայան, եւ՝ 2. արագացուցիչ: Մենք կդասվենք գիտական մակարդակով էլիտար կարգավիճակ ունեցող պետությունների դասին: Մեր պետության հանդեպ հարգանքը կմեծանա, որը նշանակում է պետության վարկանիշի բարձրացում: Մեր ունեցած մարդկային ռեսուրսները մեզ ավելի օգուտ կտան, քան թե՛ նավթը, որը մենք չունենք:

- Շատ գիտնականներ ուզում են մեկնել կոնֆերանսների, սիմպոզիումների, բայց չունեն դրա հնարավորությունը, նրանք հետագայում ի՞նչ հույս կարող են ունենալ:

- Մենք ունենք հատուկ ծրագրեր երիտասարդների համար եւ գործուղումների ֆոնդ: Ես բազմիցս հայտարարել եմ, որ այն գիտնականները, որոնք կստանան բանավոր հրավեր բանավոր զեկուցում կարդալու, որեւէ կոնֆերանսի մասնակցելու համար, ապա ԳՊԿ-ն պարտավորվում է վճարել ճանապարհածախսը: Այս ընթացքում ավելի քան 450 գործուղումներ են եղել աշխարհի տարբեր երկրներ, իսկ եթե գումար լիներ, կանեինք ավելին: